

1545

FHUORAWOG F.

ՄԻԱԿԱՆԱՔԻՒԳ

Ար

FUGURU4ANAPRHTG

17

F-50

FUN4N
1895

2010

ЗАЛА 7.05
ПКАФЪ IV.
ЮЛГА 8. № 165.

127



ԲԵՐԳՈՎԱՍՏԵՐԵՐ—ԲԵՐԳՈՎԱԾ

ՄԻԱԿՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԲԱԶՄԱԿՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՒԵՐ ՀԻՒՍԻՄԻ ԵՐԻՏԱՄԱՐԴՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

ԳԻՒՐՁԵՆՅԱ Գ. Ա.

201

Տպարան „ԱՐՈՐ“, ԲԱԳՈՒ
1895.

17
F - 50

2011

ՀՊ. 2-9172

ԲԻԵՐՆՍՏԵՐՆԵ-ԲԻԵՐՆՍՈՆ.

-50

ՄԻԱՎՈԼԻԹԻՒՆ ԵՒ ԲԱԶՄԱՎՈԼԻԹԻՒՆ

ՔՐԱԻԵՐ ՔԻՒՍԻՍԻ ԵՐԿԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳ. ՌՈՒՍԵՐՔՆԻՑ

ԳԻՒՐՁԵԱՑ Գ. Պ. Ա.

ՀԻԲ. № 17477

ԲԱԴՈՒ
ՏՊԱՐԱՆ „Ա Ր Օ Բ“

1895.

1005

50

011

Մի ՔԱՆԻ ԽՕՍՔ:

Բիեօրնսօնը Նօրվէգիայի ալժմեան հոչակաւոր բանաստեղծնէ: Նա իւր աշխատութիւնների մէջ քարոզում է այն անքարոյականութեան դէմ, որով վարակուած է ժամանակակից երիտասարդութիւնը: Այս ուղղութեամբ է գրած նրա „Միակնութիւն և բազմակնութիւն“ աշխատութիւնը: Անա նրա վերջի ընտիր գրուածքներից մի քանիսը. „Զեւնոց“, „Նոր Հոսանք“, „Աշխատութիւն և Սէր“, „Աստուծոյ ձանապարհի վրայ“, „Ոյժի միջոցով“, „Քաղաքը և նաւահանգիստը զարդարուել են դրօշակներով“: Բայց այս „Միակնութիւն և բազմակնութիւն“ աշխատութիւնը Բիեօրնսօնը համարում է իւր բոլոր գրածքների պատճեն:

Այս բանը զրելու նրան առիթ է տուել տիկին Գրունտիփը, ինչպէս նա գրում է իւր մի նամակում: Տիկին Գրունտիփը պընդում է, թէ երիտասարդները ևս կոյս և անարատ պիտի մնան մինչև ամուսնութիւնը, ինչպէս մենք այդ պահանջում ենք օրիորդներից: Նրա համոզմունքով տղամարդը նոյնքան բարուական պիտի լինի, որքան և կինը: Բիեօրնսօնը այդ ուղղութեամբ ատենարանութիւն է արել Փարիզում, Կօպենհագենում և ուրիշ քաղաքներում: Նրան հրաւիրել են այդպէս քարոզելու և շատ տեղերից: Նրա գրածքները թարգմանւած են Եւրոպական շատ լեզուներով:

ԽԱՆՈԹ. Ի նկատի ունենալով Ժողովրդին հասկանալի լինելը, բարդ նախազասութիւնները որոնք պատահում են ուսուելն թարգմանութեան մէջ, այս անդ զարձրած են պարզ նախագասութիւնների: Խոկ ու հարթ հիներու համար, թարգմանութեան մէջ հարկաւոր տեղերը մտցրած է աղասութիւն: Սակայն այս փոփոխութեան մէջ մտքերը պահպանւած են ամենայն ճշտութեամբ:

Дозволено цензурою. Тифлисъ 1 Декабря 1894 года.

Ч 9253 - ռե.



29386-67

12001



Ⅹ

Մարդկութիւնը անգաղար առաջ է գնում յտ-
ուազագիմութեան (պրօգրեսսի) մեծ ճանապարհով։
Սյդ շարժման ժամանակ յաճախ պատահում են զա-
նազան տեսակ զանդազումներ, արգելքներ և շեղում-
ներ։ Բայց յետոյ կրկին նա ընդունում է առաջուայ-
ուղղութիւնը և յառաջագիմելու ձգտումը շարունակ-
ւում է աւելի մեծ ոյժով և եռանդով։ Բայց շատերը
հաստատում են, որ այդ ձգտումը չունի միշտ դրական
բնաւորութիւն։ Ասում են օրինակ, մարդկային հաս-
կացողութիւններից ամենահինը և ամենախորինը—
կրօնականը—կարծես թէ ձգտում է ընկնել, մինչև
անգամ գրեթէ կատարեալ ոչիշանալ։

Ճիշտ չէ այդ տեսակ կարծիքը։ Կրօնի գլխաւոր
և անփոփոխ էութիւնը, նրա իմաստը առհասարակ,
դա յայտնի զսպող սկզբունքն է, «բարոյական պա-
տասխանատւութեան» զգացմունքը։ Սյս վերջինն է
միայն, որ աւելի և աւելի աճում և ամրանում է մարդ-
կութեան մէջ, այնպէս, որ այժմ նա արդէն գերա-

զանցում է այն նեղ անզարդացած զգացմունքին, որով բաւականանում էին հին ժամանակ մեր նախահայրերը: Նոյն խակ կրօնին հիմունքը՝ «Յաւիտենականութեան» և «Անստիճանութեան» պատկերացումը, անկատկած նոյնպէս հասել է մեր օրերում զարդացման բարձր աստիճանին: Այժմ նա արդէն ոչ թէ միայն կոյր հաւատի առարկայ է, այլ և զիտակցական համոզմունքի, որ պաշտպանում են մարդկային ցեղի ամենամեծ մտածողները:

Սյուպիսով մենք տեսնում ենք, որ մարդկութեան կրօնի զարդարը փոխում է միայն իւր ձեերն ու պատկերները: Բայց նրա խմական հիմքը և էութիւնը մնում են անփոփոխ: Նոյնը կարելի է ասել և մարդկութեան միւս շատ զարդարների և զգացմունքների մասին (օրինակ զահին նուիրւած լինելու զգացմունքը, հայրենասիրութիւնը և այլն): Մարդկային զատողութիւնը թողնում է միայն հետացած և նեղ շաւիգները, բայց աչ երբէք այն ուզութիւնը, որ տանում է դէպի յառաջազիմութիւնը:

Մարդկութեան ձգտումը դէպի յառաջազիմութիւնը արտայալում է ի միջի այլոց ամուսնութեան կամ կնոջ և տպամարդի միութեան մէջ:

Մարդկային ցեղի ամենահաճին պատմութիւնը՝ նրա կացութիւնն ու բարքերը գժբախտաբար մեղ յայտնի չեն: Մակայն հիմք կայ մտածելու, որ ընտանեկան

սկզբունքի աւելի հաստատուն կազմակերպութիւնը կաստարւել է կնոջ-մօր միջոցով: Նրա միջոցով են որպիքը կազմել օջախ, տուացել ցեղական և ժառանգական իրաւունքներ, հետեւաբար նա է եղել ընտանիքի և հասարակութեան ստեղծողը:

Թէ ինչպէս է եղել, որ տղամարդը դարձել է ընտանիքի և հասարակութեան վկուխ, կնոջ երեխաների և կոյրի վերայ տիրապետող, դրա մասին մենք դարձեալ ստոյգ ոչինչ չփառենք: Մենք կարող ենք միայն ենթադրել, որ այդ առաջ է եղել կրօնական որ և մեծ յեղափոխութիւնից:

Յետպէ, համեմատաբար ոչ վաղ, յեղափոխութիւն է սկսուել այդ հազար տարիներով պահւած կարգի մէջ: Կինը ձգտում է զիրքով և իրաւունքներով հաւասարությունաբարպին: Ձգտում են նոյնպէս դէպի միակութիւնը (մի տղամարդի և մի կնոջ կապը): Այդ յեղափոխութիւնը կամաց բայց ուղիղ կերպով առաջ է գնում, թէի չի կարելի դեռ ասել, որ երկրագնդի մի որեէ անկիւնում նա բոլորովին մօա է իր նպատակին:

Վերոյիշեալ յեղափոխիչ շարժման առաջին զարկը տուել է անշուշտ կինը: Կրթւելով սերնդից սկրունդ ողջախոհութեան սկզբունքների (սլրինցիպների) մէջ, դէպի ամուսինն ունեցած հաւատարմութեան մէջ, նա այդափոխ բաւականին առաջ է գնացել տղա-

մարդից և դարձել է, կարծես, նրա համար բարոյականութեան մի տիպար: Ժառանգականութեան օրէնքը ներից մէկն էլ այն է, որ սեռական յարաբերութիւնների մէջ բարոյական ողջախոհութիւնը և չափաւորութիւնը անցնում է սերնդից սերունդ: Կանայք ծանօթանալով ժառանգականութեան օրէնքների վերաբերմամբ բնական գիտութեան արած վերջին եղանակացութիւնների հետ, սկսեցին առաջադրել նաև տղամարդկանց նկատմամբ նոյնպիսի բարոյական պահանջներ, ինչպէս իրանց համար: Առաջին կարապետները այս ճանապարհի վրայ անգլոսաքսոնացի կանայք եղան: Նրանց օրինակին շուտով հետեւցին և մեր հիւսիսի կանայք: Սակայն հասարակութեան մի քանի շրջաններում մինչև այժմ դեռ պահպանում է այն համոզմունքը, որ սեռական յարաբերութիւնները պէտք է սկսւին պատանեկութեան հասակում: Իրը թէ շատ ֆիզիքական ու հոգեկան խանգարումներ առաջնում են այս հիմնաւոր ֆիզիքական պահանջը անտես անելուց:

Սյս բանի առթիւ ես հարցըել եմ գիտնական բնագէտներին և բժիշկներին, այն էլ զանազան աղութիւններից, որպէսզի չընկնեմ միակողմանիութեան մէջ: Ահա իմ տեղեկութիւնների հետեանքը:

Սկսենք կենդանիների աշխարհից: Վայրենի կենդանիները զգում են սեռական յարաբերութեան պա-

հանջ, միայն ֆիզիքական կատարեալ հասունութիւնից յետոյ: Խոկ եթէ այդպիսի ցանկութիւն յայտնում է նշ բոլորովին զարգացած և թոյլ անհատների մէջ, այդպիսիները գրկած են լինում նրան բաւականութիւն տալու կարողութիւնից, որովհետև աւելի զօրեղ և չափահաս հակառակորդները թոյլ չեն տալ այդ: Գանք ընտանի կենդանիներին: Մրանց սեռական յարաբերութիւնները մարդիկ կարելոյն չափ շտապեցնում են իրանց օգտի համար: Բայց յայտնի է, որ միայն կատարեալ հասունացած անհատների ծնունդն է տալիս ամրակազմ և լաւ սերունդ: Օրինակ. Նորվէգիայում կովերի և ձիերի ամբողջ սերունդներ մանրացել և անյայտացել են այն պատճառով, որ զուգաւորութիւնը դոցա մէջ սկսել է չափազանց վաղ: Խոկ ինչ վերաբերում է մարդկանց, մենք հետեւան ենք տեսնում: Կլիմայական և ուրիշ պայմանների պատճառով, թէև ստոր ցեղերի մէջ չափազանց վաղ է սկսում սեռական յարաբերութիւնը, բայց շուտ էլ գագարում է՝ անհատների ֆիզիքապէս վաղաժամ թառամելուց: Քաղաքակիրթ ազգերը նոյնուղիս կարծեմ, ունեցել են բաւականին ժամանակ և հիմունքներ համոզելու, որ նախ սեռական վաղ յարաբերութեանը հետեւում են շատ վնասներ՝ մանաւանդ կանանց համար և երկրորդ՝ որ առողջ և լիովին զարգացած ծնողների երեխաները աւելի ընդունակ են գտնուում զո-

յութեան կռւի մէջ։ Սյստէս, ուրեմն, նոյն իսկ բնութեան պահանջները և կեանքի պայմանները ցոյց են տալիս, որ ողջախոհութիւնը անհրաժեշտէ մինչև ֆիզիօքական կատարեալ հասունութիւնը։ Բայց մարդիկ սովորել են այդ բոլորին հակառակ գնալ։

Ահա ինչ են ասում, օրինակ, ո ի ը ոյ ազատութեան մի քանի պաշտպանները։ Հին ժամանակները ամուսնանալու կանոնաւոր հասակը 15—16 տարեկանն էր։ Իսկ մեր ժամանակը կենսական բարդած պահանջն ե բը բաւական յետ են մզել այս ժամանակամիջոցը, մինչդեռ սեռական ձգտումը զարթնում է առաջուայ ժամանակ։ Ուստի ասում են, հարկաւոր չէ հակառակ գնալ բնութեան, այլ հարկաւոր է գին ձգել նախապաշարմունքների շղթաները և աղատօրին անձնատուր լինել ֆիզիօքական պահանջին։ Կանանց այս դէպքում պէտք է տալ նոյն իրաւունքները, ինչ որ տղամարդկանց։

Լսելով այդ տեսակ զատողութիւններ, կարելի է միայն զարմանալ, որ նրանց արտայայտող անձինք ծանօթ չեն զիտութեան վազուց հաստատած օրէնքների հետ (կամ դիտաւորութեամբ են զանց առնում)։ Այդ օրէնքներից առաջինն է՝ բարձր օրգանիզմների ֆիզիօքական կատարեալ զարգացման համար հարկաւոր է աւելի երկար ժամանակամիջոց, քան թէ աւելի ստոր օրգանիզմներին, երկրորդ՝ բարձր օրգանիզմ-

ները մեծ ժամանակամիջոցներում տալիս են չափաւոր ծնունդ, իսկ ստորները, ընդհակառակը, գերազանցում են չափազանց պտղաբերութեամբ։ Անհատի սեռական ֆունկցիաները և նրա ընդհանուր զարգացման աստիճանը գտնուում են այդպիսով հակառակ յարաբերութեան մէջ։ Ուրեմն «սիրոյ ազատութեան» պաշտպանները ի նկատի չեն ունեցել, որ, եթէ այժմ ամուսնութեան ժամանակամիջոցը յետաձգւել է չնորդիս կեանքի բարդւած պայմաններին, որոնք պահանջում են մարդկային ընդունեակութիւնների աւելի մեծ և բազմակողմանի զարգացում, հազար ինքն ըստինքեան պիտի յետաձգւի և մարդուս սեռական հասունութիւնը։ Օրինակ հիւսիսում տղամարդը չի հասնում ֆիզիօքական և մտաւոր կատարեալ զարգացման 25 տարեկանից վազ, իսկ կինը 20 տարեկանից։ Սեռական վազահաս ցանկութիւնը այդ պատճառով պէտք է համարել արհեստական կերպով առաջացած և ոչ թէ բնական, և նրան կարելի է և պէտք է յաղթահարել։ Իսկ ինչ վերաբերում է մեր զերմանական ցեղին, գեռ Տակիտոսն էր զրում, որ զալերի երկարամեայ երիտասարդութիւնը կախւած էր զիլաւորապէս նրանց ուշ ամուսնանալուց։

Գոյել մի ժողովուրդ նրա երկարամեայ երիտասարդութեան համար, այդ միհնոյն է, թէ բերել է այդ ժողովրդի կենսական ոյժերի ամենալաւ ապացոյցը.

իսկ ասել, որ վերջինս կախւած է ուշ ամուսնանալուց, նշանակում է իմանալ ցեղի կատարելազործւելու օրէնքները:

Հին սակսերը՝ անգլիացիների նախահայրերը նոյնպէս ընդունած էին իբրև կանոն, որ երիտասարդները պէտք է պահպանէին ողջախոհութիւնը մինչև 25 տարին, «որպէսզի ինչպէս իրանք ասում էին—ամրանան, աւելանան նրանց մկանների ոյժը և հասակը»: Իսկ զիսաւոր նպատակը հասկանալի է, որ եղել է ուժեղ ու ամրակազմ սերունդը: Ես չեմ քննիլ այն հանգամանքները, որոնք պատճռ են դարձել վերոյիշեալ ողջամիտ գաղափարների կորստին, կասեմ միայն, որ ներկայում մարդկանց մեծամասնութիւնը սկսել է, բարեբախտաբար, հասկանալ, թէ ինչ բան է նա մինչև հիմա իսկապէս արհամարհել և ինչ հետևանքներ է ունեցել այդ թեթևամիտ արհամարհանքը: Անզգիական և ամերիկական մարմնամարդները և ձիահեծները արգէն փորձում են մասամբ վերականգնել այն կորցրած գաղափարը, որը կարենոր և անհրաժեշտ է համարում ֆիզիքական կարելոյն չափ կատարեալ զարգացման համար: Պէտք է յօւսալ, որ ամենուրեք տարածւող ձիարշալի և մտրմնամարզութեան հետ փոքր առ փոքր ոյժ կ'ստանայ և ողջախոհութեան օրէնքը:

Սեռական ժուժկարութիւնը երբէք չի թուլաց-

նում մարդկային բնութիւնը, ինչպէս այդ ասում են յաճախ, և չի յառաջացնում ոչ մի հիւանդութիւն, եթէ միայն դրա հետ միասին վարեն խելացի և կանոնաւոր կեանք: Օրինակ «կուսական գունատ ոկարութիւնը», որի փրկութիւնը գտնում էին մինչև այժմ միայն ամուսնութեան մէջ, համաձայն Վիրլսովի և ուրիշների վերջին հետափօտութիւններին, ունի այժմ բոլորովին ուրիշ պատճառներ: Նրանով կարող են հաւասարապէս հիւանդանալ թէ ամուսնացած կանայք, թէ պոռնիկ կանայք և թէ մինչև անգամ ութ տարեկան աղջկերք: Բաւական է մի այդպիսի յաջող բացատրութիւն, որ կործանիչ հարւած դրուի բազմաթիւ անմիտ նախապաշարմունքներին և գրականական անտեղի գատարկախօսութեան: Տղամարդի մասին նմանապէս երկար ժամանակ ասում էին, որ սեռական ժուժկարութիւնը հոգեկան խանգարում է պատճառում: Բայց ահա զիստութիւնը պահում է մի առանձին վիճակարական սիւնակ—, հոգեպէս հիւանդներ սեռական ժուժկարութիւնից¹: Եւ ինչ էք կարծում—այդ սիւնակը զրեթէ պարապ է: Ի նկատի ունենալով այդպիսի մի անլացոյց, հաւատալի է, որ շուտով կ'դադարեն այս հարցի վերաբերեալ վերջին հակաճառութիւններն էլ: Սմենքը կ'համաձայնուեն, որ ոչ ոք չի խելագարուել բացառապէս սեռական ժուժկարութիւնից: Խելագարուեմ են մարդիկ առաւելապէս նրա-

նից, որ այս բանի նկատմամբ շատ են զօռ տալիս իրանց երեակայութեան:

Նորվէգիայի բժշկական ֆակուլտէտը տալիս է այս բանի առջիւ հետևեալ եղբակացութիւնը: „Հիմնուելով մեր հմտութեան վրայ, մենք սխալ ենք համարում այն համոզմունքը, թէ բարոյական կեանքը և սեռական ժուժկալութիւնը վտանդ են առաջացնում առողջութեան համար: Մեղ յայտնի չէ ֆիզիքական որևէ ժուժկալութեան կամ քայլքայման մի օրինակ, որի պատճառը հարի լինէր ճանաչելու բարոյական անարատ կեանքը“: Ահա, ուրիմն, ինչ են ասում մարդիկ, որոնք հիմք ունին յենւելու իրանց հմտութեան վրայ, որոնք ունին բժշկական ընկարձակ փորձառութիւն և իրանց կարծիքներն ու գիտողութիւնն էլ գիտնական եղբայրակիցների հետ փխանակելու հնարաւորութեամբ: Նոյնը հաստատում է և մի ամսագրի մէջ, որ հրատարակում են հիւսիսի երիտասարդ բժիշկները, որոնք, ինչքան ինձ յայտնի է, գիտութեամբ և բարեխզնութեամբ ոչնչով յետ չեն մնալ միւս երկրների բժիշկներից: Այսպիսով մարդկային ընդհանուր յառաջադիմութիւնը արտայացուում է ի միջի ալլօց և հետեւեալ զօրացող շարժման մէջ: Մարդիկ աւելի ու աւելի աշխատում են ունենալ բարոյական ժուժկալութիւնը և հաստատել „մի տղամարդի և մի կնոջ միութիւնը“: Այս բա-

նում մարդկանց գիտակցութիւնն ու խիղճը արել են այնովունի խոշոր քայլեր, որ այլ ևս աներեակայելի է վերապառնալլ դէպի անցիալի նեղ և տգեղ գտղավարները: Սաացի „խիղճը“, որովհետեւ այս վերջինը նոյնպէս ենթարկում է յառաջադիմական օրէնքին: Նա ներկայացնում է մարդկութեան ձեռքով մշակւած բարոյական հայեացըների և զաղափարների մի տեսակ համախմբումն: Նա գրանով անդրագարձնում է իւր մէջ համբաւաւոր „ընդհանուրի (հասարակական) կարծիքը“: Ինչպէս բարոյական զգացմունք, նա երեան է գալիս իրեկ մարդկային յատկութիւնն: Անհատը կարող է, ՚իհարկէ վշացնել այդ թանկազին ժառանգութիւնը, բայց մի սերնդի, մարդկութեան աճող մի ճիւղի մէջ վերջինս կարող է միայն աճել և ուժեղանալ: Օրինակի համար հետեւնք մի քիչ պատմական կեանքի ընթացքին, դիցուք հէնց միայն մեր երկրի:

Հարացլդ զանգբահերի ժամանակ իշխաններից իւրաքանչւրը կարող էր ունենալ մի քանի իրաւահաւասար կանալը: Գրանից յետոյ, երբ իրերի այդպիսի դրութեանը վերջ դրուեց, մենք դարձեալ ընդունում էինք օրինաւոր ժաղուհու որդու հետ միասին և ալբայական հարձի որդուն, իրեկ զանի թեկնածու, հաւասար իրաւունքներով: Ժամանակի ընթացքում այդ երեսլ դադարեց գոյութիւն ունե-

նալ: Սակայն XVI և XVII դարերումն մենք գեռ պատահում ենք ուսմիկների և մինչև ամսզամ քահանաների մէջ այդպիսիներին, որոնք չեն դժուարանում իրանց աղջկները մի առ ժամանակ շնորհել թափառըներին կամ իշխաններին: Փոքր առ փոքր աւանդութիւնների աշխարհն անցան և այդպիսի սովորութիւնները: Բայց արժէ միայն մտաքերել մի քանի խնչոյքների այլանդակութիւնները, մանաւանդ հոչակաւոր,, երշիկի‘‘ խնչոյքներինը*, որպէս զի հասկանալի լինի, թէ խսկապէս խնչքան երկար են պահպանուել հին կարգերն ու բարքերը: Անցեալ դարի վերջը և ներկայ դարի սկիզբը նմանապէս յայտնի էին գեռ շատ բանով, որ կ'վրդովէր մեր ժամանակի հասարակական խիզը: Եւ այդպէս, բարոյական յառաջադիմութիւնը ակնյայտնի է:

Ինձ մի գուցէ առարկեն, որ մեր ժամանակակիցներն էլ զաղանի գործում են ոչ պակաս յանցանքներ: Բայց նախ մասնաւոր դէպքերը ոչինչ չեն ապացուցանում և երկրորդ հէնց այն, որ այդ յանցանքները ստիպուած են ծածկուիլ զաղանիքի քօղի տակ, վկայում է յառաջադիմուր,, հասարակական կար-

* Առաջարկում էին աշնանը, ձմեռուայ բոլոր հողացողութիւնները վերչայնելուց լետու, երբ մորթուուում էին ընտանի թոչուններ ու անսուններ, աղում և չորսանում էին միս, պատրաստում էին կոլրաններ և այն: Այդ խնչոյքները վերջանում էին սովորաբար անապիսի աղմկալի և կեղտուա արարողութիւններով, որոնք իրանց այլանդակութեամբ աննկարագրելի են:

ծիրի‘‘ յաղթանակի մասին: Յառաջադիմական սլրօցէսը հէնց զրանում էլ կայանում է, որ փորձը հարկադրում է աւելի և աւելի շատ մարդկանց կանակածանքով նայել մինչև այժմ տիրապետող գաղափարների կատարելութեան և անշարժութեան վրայ: Այդ գէպքում հասարակութեան մի քանի անդամները օրինակ են տալիս, միւսները ուրախութեամբ հետեւում են նրանց, մի այլ խումբ ստիպւած է լինում հետեւ, իսկ ուրիշները վերջապէս, չեն կարողանում և չեն ուզում անել այդ: Որովհետեւ ուզզութիւնը ստեղծում են օրինակ տուղները և այդ օրինակին հետեւողները, ապա յառաջադիմութիւնն էլ արտայայտուում է հետեւ չկամեցողների թւի նուազելու մէջ, և ոչ, ՚ի հաճոյս նոցա, բարոյական պահանջների թուանալու մէջ:

Այս գործին առաջին զարկ տւողը, ինչպէս մենք տեսանք, եղել են կանայք: Սակայն մարդկութեան բարոյական յառաջադիմութիւնը շատ զանգաղ և թոյլ է, որովհետեւ հասարակութեան գեռ շատ և շատ անդամներ չեն հասել բարոյական զիտակցութեան այն բարձրութեան, որ պահանջում է ողջախորութեան և ,միակնութեան‘‘ օրէնքը: Կանանց մէջ գեռ կան այնպիսիները, որոնք կարիքից ստիպւած վաճառում են իրանց: Կան և այնպիսիները, որոնք ընկնում են թեթեամտութիւնից: Բայց այն կինը,



որ մեծացել է ժառանգականութեան, ընտանիքի, կրթութեան, կրօնի, լուսաւորութեան և վերջապէս հարստութեան և աշխատանքի բարեպատեհ պայմանների մէջ, կարո՞ք է արդեօք ընդունակ լինել այդպիսի մի կին ինքնակամ դաւաճանելու իւր դէպի սիրելի անձն ունեցած բարոյական պարտաճանաչութեան:

Սյդ առիթով ևս աւելիբրդ չեմ համարում յիշել Հանո-Եղերի մի գրքի „Խրիստիանիայի բօգիմայի“* մասին, որը մի ժամանակ իմ ձեռքին էր: Ես նեղութիւն չեմ քաշիլ կարդալ նրան մինչեւ վերջը, եթէ չցանկանայի իմանալ նրա լուծումը՝ կընկնեն, թէ անսասան կ'ո՞նան զայթակեցնողների գէմ զրքի մէջ նկարագրած երեք կանալը—բարեկարդ ընտանիքից: Բանից երկաց, որ նրանց անկարելի էր չեղել պարտաճանաչութեան ճանապարհից: Սյդպիսով Եղերի գրքի իմաստը բովանդակում է իւր մէջ իմ սկզբում դրած հարցի պատասխանը: Կինում են այնուամենայնիւ և բացառութիւններ, բայց դարձեալ ես կարծում եմ, ոչ ոք (զուցէ բացի satyriasis-ով բռնւածներից) չի թող տալ իբան կասկածել այն բանում, որ յառաջադիմուղ մարդկութիւնը ոչ մի դէպքում չի հրաժարուիլ այն ֆիզիքական և բարոյական

* Այդ զերքն արդեւած է հիսուսում իրեն անբարօտական զբուածք:

կազդուրելուց, որը մացրել է մարդկային սերնդի մէջ կինը իր հաւատարմութեամբ ողջախոհութեան և միամուննութեան օրէնքին:

II

Մինչի այժմ գեռ գոյութիւն ունին հասարակութիւններ և մինչի անդամ ամբողջ ազգեր, որոնք ողջախոհութեան և „գէտի մէկը հաւատարմութեան“ պահանջները օրէնք են գարձրել միայն կանանց համար. իսկ տղամարդիկ հետեւում են բազմակինութեան: Սակայն բացարձակ բազմակինութեան ամենալաւ ներկայացուցիչների մէջ—մահմետականների մէջ—կազմել է արդին մի տեսակ ավանդ, որը միակնութիւն է պահանջում ամենախիստ կերպով և, ինչպէս ես լսեցի Ուսպալի մի սլովենօրից, որ երկար ապրել էր մահմետականների մէջ, միակնութիւնը հետղիտէ տարածւելով զբաւում է աւելի և աւելի իրաւունքներ: Սյդ հէնց այդպէս էլ պիտի լինէր: Բազմակինութիւնը առհասարակ տանում է ժողովրդին միայն գէտի ֆիզիքական և բարոյական թուլացումը: Կնոջ վրայ նայելը, իրեն մի հասարակ գնելի ու վաճառելի առարկայի վրայ, վաղ է ապականում երիտասարդութեան մարմինը և հոգին: Իսկ հարեմական դրութեան հետևաներն այն է, որ փափկասիրութեան

և ծուլութեան խաւարի մէջ ընկղմած այդ հասարակութիւնը չէ ձգտում որև է բարոյական կատարելութեան, զրկւած լինելով ընտիր կնոջ արթուն և խրախուսիչ աղդեցութիւնից։ Աւելորդ է խօսել, թէ այդպիսի հասարակութիւնը նրան յետ է մնում մերից ընդհանուր յառաջադիմութեան գործում։

Ամերիկացիների մէջ նոյնպէս բազմակնութիւնը ունի դեռ ներկայացուցիչներ աղանդաւոր մորմոններից։ Մանաւանդ նա ծաղկել էր սրանից քիչ առաջ հարաւային նահանգներում, երբ այնտեղ գոյութիւն ունէր ստրկութիւնը։ Ստրկատիրութիւնը և բազմակնութիւնը միշտ գնում են ձեռք ձեռքի տուած, այնպէս որ ստրուկների աղատութեան վարած բացարձակ պատերազմը եղել է մինոյն ժամանակ և գաղտնի պատերազմ բազմակնութեան դէմ, որը ունի առհասարակ այնպէս անբարոյականացնող աղդեցութիւն հասարակութեան վերայ։

Այն ժամանակուայ մարդիկ կարծես բոլորովին մոռացել էին, որ հասարակութեան բարձր ոյժը և կարողութիւնը զանուում է նրա քարոյականութեան մէջ։ Ստկայն փոքր առ փոքր սկսեցին աւելի մխիթարական կերպով վերաբերուել դէպի այդ հարցը, որը մի դարի ընթացքում բռնեց վերջապէս առաջին տեղը։ Բայց ի՞նչ էր սկզբում։ Ազատութեան առաջին ախոյնեանները—կանայք (նրանք են եղել առաջինը) և

տղամարդիկ շեն կարողանում մինչև անգամ լսել տալ իրանց։ Իսկ երբ գործը բաւական առաջացաւ, նրանց սկսեցին ծաղրել և հայոյել, ապա մեղադրեցին, իբր թէ նրանք ձգտում են խախտել հասարակութեան և տէրութեան հիմքերը, սպառնում են մարդկանց աղատութեան և սեպհականութեան։ Ամեն իշխանութիւնը ունեցող, հարուստ և աղնուական, հոգեսրականութիւնը, սենատը, վեհաժողովը, մամուլը,—բոլորն էլ յարձակուեցան նրանց վրայ և այդ մեծահոգի կուռզներից շատերը նահատակւեցին իրանց գործի համար։ Հասարակական ժողովներում բացարձակ գնդակ էին արձակում այն հոետորների վրայ, որոնք ստրկութիւնը ոչնչացնելու հրաւէր էին կարգում հասարակութեան*։ Վերջապէս կրքերը բորբոքեցին անզուսպ կերպով։ Երկրագործները, արհեստաւորները, վաճառականները, գիտնականները դէն ձգեցին իրանց սպարապետները ու դէնքի դիմեցին, և հարաւայինների ու հիւսիսայինների մէջ բորբոքուեց մի սարսափելի եղբայրասպան պատերազմ։ Ստրկատէր նահանգները պատերազմական մի քանի առաւելութիւն ունէին։

* Յարտնի Պարկերը ասաց ալսպիսի մի դէպքում. „Սպասիր, թող առաջ վերջացնեմ“, և լայտնեց լետոյ այն փողոցի անունը, որտեղով դիտաւորութիւն ունէր վերապառնալ տան։ Սի ուրիշ հուտոր, որի վրա գնդակ էին արձակել և չին դիպցրել, ասաց, սախել անգամ չը գիտեն“ և հանգիստ շարունակեց իր ճառը։

Դրա համար էլ հիւսիսայինները առաջին անգամ պարտութիւն էին կրում, բայց այս բանը չ'վհատեցրեց նրանց. ընդհակառակը, նրանք աւելի մեծ եռանդով համախմբեցին ազատութեան գրօշակի շուրջը և վերջապէս տարան յաղթանակը. Խոկ ինչ ուղարձմաններ առաջարկեցին յաղթովները. ազատել բոլոր ստրուկներին և չնորհել քաղաքացիական իրաւունքներ բոլորին առանց բացառութեան: Յաղթովները չ'պահանջեցին իրանց համար նշ մի թիզ հող, նշ էլ պատերազմական տուգանքը. Սպատութիւնն և քաղաքացիների իրաւունքների հաւասարութիւն. ահա ինչ է եղել նրանց պատերազմի առիթն ու նպատակը: Տիեզերական պատմութեան մէջ չի պատահել պատերազմ, որ ծագած լինի աւելի մաքուր գրգումներից և վերջացած այնպիսի խաղաղութեամբ, որը հիմնած է բացառապէս բարյական սկզբունքի յաղթանակի վրայ:

Եւր ժամանակին ինձ յաջուռեց պատահել այդ քաջ մարդկանցից մի քանիսին, որոնք օգնել են հասարակական խոճի վերև լիշած սթափման. օրինակ, Եղիսաբէթ Ստենտոնին և Խնդերուլային: Ես նրանց հետ ունեցել եմ խօսակցութիւն իմիջի այլոց և բաղմակնութեան մասին, որով նորա վերաբերում են ուղղի բազմակնութիւնը. կ'բերեմ այստեղ մի քանի խօսք Խնդերուլայի վառվառն ճառից: «Ոչ մի լեզու աշխարհում չի կարող արտայայել, թէ բաղմակնու-

թիւնը ինչ վնաս է պատճառում հասարակութեանը: Նա դարձնում է կնոջը խորամանկութեան և ոյժի որս, խոկ տղամարդին մի գիշատիչ զաղան, որը պատրաստ է իջնել ախտերի և յանցանքների բռնոր անդունդները, միայն թէ նրան տիրէ: Ես խորին կերպով տառում և արհամարհում եմ տմեն մի հասարակական ուսում, որը չէ հիմնուած ընտանեկան անարատ սրբագան սկզբանիքի վերայ: Ամբողջ լուսաւորութիւնը, ամբողջ յառաջադիմութիւնը նրա վրայ է հանգչում: Եսըր առաքինութիւնները իենաւորնեանում են ընտանեկան օջախի շուրջը, ուր մի տղամարդը սիրում է մի կնոջ: Սշխարհիս երեսին ամենից արտայայտիչ, ամենից թանկ խօսքերը իրանց բովանդակութեամբ, որանք են՝ «իմ կինը, իմ հարսնացուն, իմ հայրը, իմ մայրը, իմ երեխան»: Այս խօսքերից զրկւած աշխարհը—մինոյն է թէ որջ, խոկ մարդիկ-վայրենի կենդանիներ:

Սյժմ վերջապէս մենք հասանք այն բանին, որի համար ես գլխաւորապէս վճռեցի խօսել: Բազմակնութիւնը, որին անձնատուր են վնաս մեղանից շատերը, ովթէ ոչ մի վնաս չի տալիս. կամ նրա հետքերը չնշւմում են խսպառ աննկատելի կերպով մեր յետաղայ օրինաւոր ամուսնութեամբ: Կը գտնեմի արգեօք մի այլքան պարզամիտը, որ հաւատայ սրան:

Ոչ, բաղմակնութիւնը—այդ իրան անմիտ վատնելլը—մեր ոյժերի աղբիւրը դարձնում է մեր ամենա-

մեծ թուլութիւնը, նա այլանդակում է մեր մէջ մարդու հոգուն միայն յատուկ սիրոյ բարձր զգացմունքը և գեղեցկութեան ձգումը:

Իսկ եթէ սկսենք հէնց այդ վերջիններից, այսինքն զեղեցկութեան ձգումից,—միթէ կարելի՞ է նշանակութիւն չ'տալ այդպիսի յեղաշրջման: Գեղեցկի զգացմունքը զօրեղ է լինում մանաւանդ պատանեկութեան քնիքոյ հասակում, այսինքն մարդու կեանքի այն նշանաւոր շրջանում, երբ այդպէս ասած դրւում են նրա ամբողջ կենսական գործունէութեան հիմքերը: Սյդ հասակում բոլոր տպաւորութիւնները այնպիսի ուժեղութեամբ է ընդունում հոգին, դոքա այնպէս են ներգործում կամքի վրայ, որ մարդ կարծես նմանում է մի երաժշտական նուագարանի, որը ներդաշնակ լրւում է, տանը, ուսումնարանում և հասարակութեան մէջ, ամեն մի դէպքից, խօսրից և իւրաքանչիւր կարդացած գրքից: Եւ ահա նոյն իսկ հէնց այդ ժամանակ կատարում է ծնողներից և դաստիարակներից գաղտնի և իրանց խօճի հակառակ այն, որ այնպիսի ողբալի կերպով հակառակ է գնում գեղեցկի զգացմունքին, որ ատիպում է կարմրել ամօթից: Սյդ զարդնի մոլութիւնը կատարում է այն պատճառով միայն, որ պատանու երևակայութիւնը թունաւորուած է լինում վատած զրոյցներով և վատ օրինակներով: Եւ վայ է, եթէ կանգ չառաւ նա ժամանակին և գնաց

այդ սահուն ճանապարհով, շուտով նրա հոգին կ'կոշտանայ, գեղեցկի զգացմունքը յաւիտեան կ'քնի նրա մէջ և նրա բարոյական դատողութիւնն իսկ կարող է այնքան աղաւաղւել, որ նա կ'կորցնէ մինչև անդամ ազնիւը անազնւից ջոկելու ընդունակութիւնը: Քանի քանի մարդիկ տուժում են կեանքի մէջ ճակատագրական սխալներ գործելով միայն նրա համար, որ գեղեցկի զգացմունքը վաղ է աղտոտւել և փշացել նըրանց հոգում:

Իմ պատճառաբանութիւնների հետ համաձայնել չ'ցանկացոյնմերը գուցէ ցոյց կ'տան ինձ մի քանի աչքի ընկնող անձնաւորութիւնների օրինակներ, ասելով. «հապա սրանք ևս պատանեկական հասակում արհամարհել են բարոյական անարատութիւնը, այնուամենայնիւ դարձեալ ցոյց են տալիս զեղեցիկ նուրբ ճաշակ և ստեղծում են վաեմ գեղարտեստական ստեղծագործութիւններ»: Բայց բաւական վտանգաւոր է զրաւուիլ բացառութիւններով և «ամենասութեղ, ընտքրւած բնաւորութիւնների» օրինակներով. և խալապէս ոչ չ'զիտէ, թէ ուրքան կառաջանային ցոյց տուած անձերի և ճաշակը և գեղարտեստական զարդացումը, եթէ նրանց հոգեկան կեանքի սկզբնական ներգաշնակութիւնը քայլայւած չ'լինէր գեռ պատանեկական հասակում վերոյիշեալ աններդաշնակութիւնից (դիսօնանսից): Անմաքուր գործերը և մտքերը այս-

պէս թէ այնպէս թողնում են իրանց հետքը, ուստի հարկաւոր է ոգու մի ահազին բարոյական թռիչք, որպէսզի ջնջի այդ հետքը և նորից վերականգնուի հոգելան կատարեալ ներդաշնակութիւնը:

«Ամենամաքուրը—ամենահզօրն է», ասում է 'ի միջի այլոց Զօլան, և այս ասացուածքը շատ յարմար է գալիս այստեղ:

Վերցնենք այժմ սիրոյ զգացմունքը: Ոչ մէկի մէջ երևան չի գալիս նա այնպիսի սրտաշարժ և զմայլելի կերպով, ինչպէս անարատ, չփշացած, վառվուն պատառու մէջ, չկայ սահման նրա հաւատաբմութեան և զոհարերութիւններին, որոնց համար սլատրատ է նա, հէնց որ նրա սիրտը թելապրէ: Բայց ինչպէս յաճախ այդ աղնիւ զգացմունքը շեզւում է դէպի վատը և խրում ցեխի մէջ: Հազիւ կարելի է լսել մի ուրիշից աւելի սառն կոպիտ գատոգութիւններ, աւելի եստիան, արհամարհական ծիծագներ, քան թէ այն երիտասարդներից, որոնք արատաւորել և փշացրել են իրանց մէջ այդ զգացմունքը, շռայլելով նրան անբարուցական կանանց:

Մի խօսքով, ինչքան խորն ես թափանցում սեռական կեանքի օրէնքների խսկական էութեան մէջ, այնքան աւելի պարզում է մեղ համար հետեւեալ իրոգութիւնը: Բաւական է, որ դէմ մի բանով մեղանչում ես սեռական օրէնքների դէմ, այնուհետև բացում է քո տռաջ մի ճանհապարհ, որի վրայով հետեւմ

են զիջումներ զիջումների ետելից և արատաւոր արարմունքներ բարոյական զգացմունքների վերաբերեալ:

Դեռ երեխայ ժամանակներս, պատահել է մեղ կարգալ պատմութեան մէջ Հոռվմայեցոց և արենելեան բանականների մասին: «հեշտասիրութիւնը և խստարտութիւնը գնում են ձեռք ձեռքի տուած»: Բայց այն ժամանակ մենք չէինք հասկանում այդ խօսքերի միտքը, նոցա միմեանց հետ ունեցած կապը: Եատերը երեխ մինչի այժմ էլ չեն հասկացել այդ: Ես ևս ոչինչ չեմ կասկածել, մինչու որ Գարվինի գրածներից չեմ իմացել, որ այդ կապը գորութիւն ունի այն ժամանականից սկսած, երբ արուներն իրար սպանում են կատաղի կուի մէջ՝ էպիս տիրելու համար, որը հանգիստ սպանում է յաղթողին: Սյուպէս անա հեշտասիրութիւն և խստարտութիւն:

Սյու երկու կորսատարեր կրքերին ես կաւելացնեմ երրորդը—սնասպարծութիւնը: Վերջինս սաստիկ ոյժով է զարգանում մեր մէջ դեռ այն էլ մեր հիմնական պատանեկալսի հասակում: Եթէ զրանից յետոյ մեղ յաջողութիւնից տնկամ յաղթահարել հեշտասիրութեան բուռն ձգառումները, այդ կիբը զարձեալ կ'ձգէ մեղ շատ սիրաների և բարոյական թշուառութիւնների մէջ: Նայեցէք օրինակ ֆրանսիացիների վրայ*: Նրանց

* Գննելով հոչակաւած անձնաւորութիւնների բազմաթիւ օրագիրները և միշտակարանները, տեսնում ենք, որ բարոյական բարեփոխութեան դորձը առաջ է գնում և նրանց մէջ: Նա անցեալ դարի վերջից արել է անկատկած մեծ քաղեր:

երիտասարդութիւնը բացարձակ անձնատուր է լինում բազմակնութեան։ Սյս բանում նրանց խիզճը և առհասարակ բարոյական զգացմունքը այնպէս սաստիկ չեն տանջուում, ինչպէս մեր երիտասարդութեանը, որը ստիպուած է գնալ գաղտնի ճանապարհներով։ Սակայն հէնց այդ բազմակնութեան շնորհիւ զարգանում են անհաստատակամութեան հաճոյանալու և յաղթերու հիւանդոտ կրքի ախտերը, մի խօսքով — «մնապարծութիւնը», որը ֆրանսիական հասարակութեան աւելի սաստիկ է հարւածում, քան որևէ ուրիշին։

«Կեանքի զուարձութեանը» հետամուտ լինելու մէջ ֆրանսիացիների մնապարծութիւնը հասել է ամենակալ ոյժի։ Նրան համարձակ կարելի է կոչել այդ փառաւոր ազգի երգուեալ թշնամի (կուզէի ասել և միակ). այդ թշնամին տանում է իւր հետ բոլոր մնացածներին։ Վերցրէք ֆրանսիացիների հասարակական կեանքը։ Սյս վերջինս առհասարակ մի ուրիշ բան չէ, եթէ ոչ մասնաւոր անհատների կեանքի աւելի ընդարձակ արտացոլում։ Որպէս զի երկար չ'փնտուենք, կանդ առնենք Ֆրանցիսկ I, Հենրիկոս IV, Լիւդովիկ XIX և XXV-ի, յեղափոխութեան զործիչների և վերջապէս Նապոլէոն III-ի ժամանակիների վրայ։ Ի՞նչ հիւանդոտ սնափառութիւն, ինչպիսի ցուցամոլութեան կիրք և ինչպիսի ատելութիւն դէպի մարդկային արժանաւորութիւնը։ Իսկ այն տոկութը, որից օգուտ է քազել

յիշեալ կայսրը ֆրանկօ-պրուսական պատերազմը յայտարարելու համար։ Ինչպիսէ անխիզճ սնապարծութիւն է. ինչքան ճիշտ յուսադրութիւն ազգի սնափառութեան վրայ և ինչպիսէ աշառ-թեթեամիտ կուրութիւն դէպի իւր և թշնամու ոյժերը։ Յետոյ հասարակապետութիւնը։ Հասարակապետութիւնը պիտի ամբավնդուի, զառնայ հասարակապետութիւն բառիս բուն նշանակութեամբ և ոչ թէ մնայ իբրև մնանկացած միապետութեան խնամակալ։ Եթէ այսպէս են ցանկանում, հարկաւոր է ամենից առաջ սկրտ առնել, կռւել ազգութեան ամենակուլ թշնամու դէմ։ Եւ ահա այդ թշնամին՝ մնափառութիւնը, բաւականութիւն ստանալու թեթեամիտ ծարաւը, աւերող զարթականական փորձերը, աստիճանաւորների անմիտ ճոխութիւնը, (ուրեմն և կաշառակերութիւնը) ու նաւատորմղի շլացուցիչ շռայլութիւնը։ Ահա այս ամենի հետ պէտք է կռւել և այս բոլորին յաղթել։ Եթէ չէ, վազօրօք կարելի է գուշակել նրա անյարատեսութիւնը։

Առհասարակ սկսենք դիմել ազգի պատմութիւնը «անձնական պատասխանատութեան տեսակիցից և վնասուենք այդ կէտը մեծ ուշադրութեամբ և մարդկային հոգու վիտութեամբ։ այն ժամանակ կարող ենք համենել բաւականին մեծ զիւտերի։ Ժաղովուրդների վիճակի շատ տիսուր յեղաշրջումներ պէտք է վերացրել առանձին մարդկանց սնափառութեան կամ «մեծա-

մոլութեան» (մի հոգեքան բժիշկ մի անդամ իմ ուշադրութիւնը դարձեց մի ամբողջ շարք պատմական անձնաւորութիւնների վրայ, որոնք տանջւել են այդ մոլութեամբ): Սակայն ամենըն էլ գիտեն որ միծամոլութեան ձևով արտայայտուի խելագարութիւնը հետևանք է ժառանգած կամ ձեռք բերած յայտնի սեռական տկարութեան: Ուստի կարելի է երեակայիլ, թէ որքան աղղային աշխատանքներ և ընդհանուր յառաջադիմութիւն է փչացրել միակ այդ սարսափելի հիւանդութիւնը:

Սյժմ զիտենք երիտասարդութեան սեռական սմաժութկարութեան և բազմակնութեան մի ուրիշ կորբատարեր հետևանքը: Այդ անձնիշխանութեան և բարյական հաստատակամութեան պակասութիւնն է: Սեռական կրքերը սանձարձակ թողնելով վազ «հիմնական» հաստկում, մարդիկ յետոյ կատարեալ անիրնդունակ և բարոյատէս անզօր են դառնում զստել իրանց այդ գաժան սովորութիւնից: Մենք առանձին կարեւրութիւն չունինք օրինակների համար զիմելու ուրիշ երկրների: Դրանց մենք աչքի առաջ կունենանք մեր քինութեան մէջ միայն նրա համար, որ ցաւալի կերպով չ'իբաւորենք մեր սեպհական ինքնասիրութիւնը: Վերցնենք դարձեալ միևնույն ֆրանսիացուն: Խնչի նման է դառնում նա, այդ սովորաբար կարգին, դէօլ ինքը այնքան խիստ և հոգատար մարզը, երբ նրան

տիրում է կիրքը: Նա զրկում է գիմադրութեան սրեւ ոյժից և արագութեամբ թռչում է գէպի բացւած անգունդը: Խոկ այդ անդունդը ֆրանսիացիներին սպասում է ամեն տեղ՝ թէ ուրիշ տէրութեան մէջ, թէ պատերազմի գաշտում: Նա բացւում է կրօվկ կուրացածների ստերի տակ և կլանում է նրանց հազարներով այնպիսի բազէում, երբ հայրենիքը խիստ կարիք է զգում նրանց հանգիստ քաջութեան: Ֆրանսիայի ականաւոր հեղինակները աչք ձգեցին վերջապէս այդ անդունդի վրայ և նկարագրեցին նրան անխնայ մերկացողութեամբ: Խնչպիսի անդունդ գարշաճուտ ապականութիւն է փշում ամբողջ աշխարհում այդ մերկացումներից:

Սյստէս արմատացած պակասութեան սեռական անժութկարութեան հետևանքը, լինում է սովորաբար կամքի ընդհանուր թուլութիւն, իսկ յետոյ կենսական եռանդի վերջնական անկում: Սյօպիսով մարդ կորչում է այն ժամանակ, երբ նրանից և նրա գործունէութիւնից ամենամեծ օգուտ կարելի էր սպասել: Օր, Միքարօն, որ յեղափոխական ձգտումների և բարենորոգումների հոգին էր, իր անժութկարութեան գոճ գնաց այդ գործունէութեան ամենաեռուն ժամանակը: Գամբետան, երբարդ հասարակապետութեան հանձարեկ գործիչն էր, որին կորցնելով վերջինս խճանեց անկարգութիւնների մէջ, նա նմանապէս

կորաւ իւր անժուժկալութիւնից, այն էլ այն ժամանակ, երբ հայրենիքը նրանից շատ բան էր սպասում։ Արեմտեան Ամերիկայում մի անգամ սենատութեան համար կրկնակի ընտրութիւն պիտի լինէր։ Թեկնածուն մի յայտնի քաղաքագէտ էր, որը արդէն մի անգամ վարել էր այդ պաշտօնը։ Բայց ընտրութեան ժողովում կանգնեց անդամներից մէկը, որը պատկանում էր հին պոլիտանական ցեղին և ասաց. «Ես տեսել եմ մի անգամ, ինչպէս մեր նշանաւոր գործիչը զուարձացող խմբի հետ մտաւ մէկ հասարակաց տուն։ իսկ նա, որ կարողանում է խաբել իւր կնոջը, կարող է խաբել և ուրիշներին»։ Եւ թեկնածուն չընտրւեց։ Կ'զայ արդեօք այն ժամանակը, որ նոյն բարոյական պահանջը կ'առաջարւի ամենքին անխտիր։

Ամեն մի յառաջադիմութեան առաջին պայմանները կենսական եռանդը և անձնիշխանութիւնն են։ Ուստի հարկաւոր է կրթել մարդու մէջ այս յատկութիւնները ամենավագ հասակից։ Մինչդեռ ամեն տեղ մենք տեսնում ենք բոլորովին հակառակը։ Գրեթէ ամեն տեղ տիրում է ընդհանուր թեթեամտութիւն, բնաւութեան պակասութիւն, աւելորդ զղայնութիւն և կեանքի բերկութեան կորուս։ Խոկ որքան տանջում են դրանից մեր կանայքը, երեխանները, ամբողջ ապագայ սերունդը... Ինչպիսի տիսուր կնիք է դրոշմում նա մեր ընտանեկան կեանքի, ամբողջ հասարակութեան

և գրականութեան վերայ։ Բայց այս բոլորը շատ լաւ նկարագրել են մեր ժամանակակից հեղինակները։ Ուստի ես չ'պիտի երկար խօսեմ այդ խնդրի առթիւ, միայն կ'աշխատեմ ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, որը քիչ է աչքի ընկնում, կամ որի առաջ դիտմամբ փակում են իրանց աչքերը ամենքը՝ մանաւանդ կանալը։

Բազմակնութեան կորստաբեր սովորութիւնը իւրացնողը չէ աղատում նրանից բոլորովին նոյն խակ օրինաւոր ամուսնութիւնից յետոյ։ Այդ առարկային թեթե վերաբերութիվ կ'մնայ նրա մէջ մինչև կեանքի վերջը։ Այն, կ'մնայ, եթէ մինչև անդամ նա խուսափէ խսկական յանցանքներից իւր կնոջ կամ երեխանների սիրոյ համար (ես իմանում եմ մի քանի այդ տեսակ սրտաշարժ օրինակներ), կամ վերջապէս իւր պաշտօնի համար, որը վախենում է կորցնել։ Մի խօսքով մարդուս փրկում է արդէն ոչ թէ «կաճքը», այլ «հանգամանքը»։ Ահա հէնց այս բանը պիտի բացաձակ խոստովանէր տղամարդը։ հէնց այս բանը յայտնի պէտք է լինի իւրաքանչիւր կնոջ, մանաւանդ ամուսնացած կնոջ։ Այն, եթէ այդ իմանար կինը և տղամարդը քաջութիւն ունենար այս խոստովանելու, այն ժամանակ թեթեացած կ'լինէր ապագայ սերնդի ինքնակատարելութեան աշխատանքը։ Այն ժամանակ ընտանիքը կ'մաքրւէր այնքան, որ ընդունակ կ'դառ-

նար երեխաներին աւելի նպատակայարմար կը թութիւն տալու, քան թէ այն, որ տրեռում է այժմ։ Այն ժամանակ գուցէ և մեր ուսումնաբանների մէջ կատարւէր ցանկալի բարեփոխսութիւնը և գեղարուեատն ու գրականութիւնը նոր ոյժեր կ'վաստակէին։ Այն ժամանակ. և լրագիրները կը խառնեւէին բարոյականութեան գործի մէջ և չէին ծառայիլ բարքերի ապականութեան։ Զէ՞ որ տղամարդի բազմակնութիւնից տուժում է ոչ միայն նրա սկզբանեան ընտանիքը ներկայում և ապագայում, այլ և նրանք, որոնց մօտ նա տանում է իր կիրքը և այդ կրթից անբաժան բարոյական ապականութիւնը։ Բայց այն ինչ ամօթալի է ասել, քահանաներն անգամ կանգնել էին ինձ դէմ։ Նրանք ասում էին, որ չէ կարելի բարոյականութեան հաւասար պահանջներ դնել տղամարդկանց և կանանց համար. որ պղծել ընտանեկան օջախը կարող է միայն կնոջ և ոչ թէ տղամարդի բարոյական անկումը։ Բայց հօ կինը միայնակ չէ կարող ընկնել բարոյատէս և պղծել իր ընտանեկան օջախը։ Նրա օգնական կամ, կամ, կամ է ասել, մինչև անգամ գլխաւոր յանցաւոր այս գործում դարձեալ նոյն տղամարդն է։ Ուրեմն դէպի տղամարդը աւելի ներողամտութեամբ վերաբերութիւնը, քան դէպի կինը—առնուազը անարդարութիւն է։ Յետոյ, ով է ամենից շատ տուժում տղամարդկանց այս բազմակնութիւնից։ Մէր աղախին-

ները, բանոր կանայքը ու կար անողները և այն։ Բայց, չէ որ, նրանք էլ երբեմն ընդունում են «օրինաւոր» կոչւած ամուսնութիւնը—և ոչ միայն նրանք, այլ մինչև անգամ կատարեալ անբարոյականացած պոռնիկները։ Եւ այսպիսով բարոյական վարակումը անցնում է շարունակաբար միւններին։ Այսպէս վարւիլ, հասարակութիւնը ինքն է փորում իր տակը, ինքն է մաշում իր գոյութիւնը և երբեցէ կ'համնէ հատուցման ժամը։

Ներջացնում եմ այս մասը, այժմ ցոյց տամ այն հիւանդութիւնները, որոնց պատճառը կազմում է միշտ մինոյն սեռական անժուժկալութիւնը։ Մենք արդին խօսեցինք մեծամոլութեան մասին, որը տարածւած է երկրիս երիսին աւելի, քան կարծում են, քան ուզում են իմանալ (միայն համեմատաբար քիչ ժամանակ առաջ սկզբն են աւելի լրջօրէն մշակել այդ հարցը)։ Բայց կայ մի ուրիշ աւելի սարսափելի սեռական հիւանդութիւն, որի պղբուրը մինոյն անժուժկալութիւնն է։ Ուրան մարդիկ են փշանում նրանից և սոցա մէջ քահից չհօրհալի, տականդաւոր, մինչև անգամ հանձարեղ մարդիկ են լինում։ Զէ՞ որ ամենից հարուստ ընաւորութիւնները լինում են յաճախ և ամենից անգուսդ. որանից կարելի է եղբակացնել, թէ որքան մեծ է հասարակութեան համար հէնց միակ այդ հիւանդութիւնից գոյացած կորուսոր։

Եթբ ես զրում էի այս տողերը, իմ յիշողութեան առաջ պատկերացան մի շարք տաղանդաւոր անձնաւորութիւններ։ Դրանց վաղաժամ կորուստը այս ահուելի հիւանդութիւնից, ես առիթ ունեցայ դիտել իմ համեմատաբար ոչ երկար կեանքի ընթացքում։ Շատերը նրանցից կարող էին ասլաղայում զառնալ հայրենիքի փառք ու ոլարծանք—մանաւանդ մէկը։ Նրա մասին կարող եմ ես համարձակ տսել, որ նա ունէր համաշխարհային հանճար դառնալու բոլոր պայմանները։ Մի ուրիշը—արդէն հասել էր նշանաւոր փառքի և կարող էր դեռ առաջ գնալ։ Բայց նրանք բոլորն էլ կորան զար տեղից։

Եւ թող չ'մտածեն, որ այս հիւանդութիւնը տարածւած է միայն հասարակութեան ստոր խաւերի մէջ, ոչ, նա թափանցում է ամեն տեղ և հասարակութեան ամենաբարձր խաւերը։

Մի անդամ պատահեց ինձ խօսել մէկ բժշկի, սեռական հիւանդութիւնների մասնագէտի հետ, որն այժմ յայտնի վիրաբայժ է։ Խօսք եղաւ նոր յարուցած հարցի մասին, թէ ինչպէս պէտք է վիրաբերուել այն հանգամանքին, որ երիտասարդութիւնը թեթև յարաբերութիւններ է սկսած կանանց հետ։ Մենք երկուս էլ եկանք այս եղբակացութեան։ Եթէ, մինչև անգամ, ոչ մի ուրիշ բան չ'խօսէ այդ կենակցութիւնների գէմ, բաւական է հէնց այն, որ կինը այդ ճանապար-
